

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

08.03.2021



Սիրելի՛ կանայք, մայրեր, դուստրեր ու քույրեր

Հետպատերազմյան Հայաստանում բոլոր տոների խորհուրդն է փոխվել, ու գիտեմ, որ զարունն ու զարթոնքը խորհրդանշող Մարտի 8-ը ևս այս տարի ձեզ համար այլ երանգ ունի...

Մեր հայրենիքը վերքեր ունի, իսկ դրանց ցավն ամենից առաջ ու ամենից շատ կանայք են զգում ու ապրում:

Այդուհանդերձ, չենք կարող մոռանալ, որ այսօր ձեր տոնն է ու եթե մշտապես մեծարում ու գնահատում ենք ձեզ, դժվարին ժամանակներում, առավելա, չենք կարող անտեսել օրը:

Ուրեմն, Մարտի 8-ի առիթով պարտավոր ենք ասել, որ շնորհակալ ենք հայ կնոջը, որ հենց այսպիսին է՝ հոգատար և ուժեղ, քնքուշ ու զորավոր, սվիրված՝ թե՛ ընտանիքին, թե՛ հայրենիքին, թե՛ այն աշխատանքին, որ ստանձնում է: Ամենաօրհասական օրերին էլ եղել ու մնում էք մեր կողքին, տալիս հույս ու կորով, լինում նեցուկ և աջակից, ապացուցում, որ արժանի եք անվերապահ սիրո ու հարգանքի. նման ժամանակահատվածներում ավելի է արժևորվում ու կարևորվում ձեր դերը:

Այսօր, առաջին հերթին, իմ խոնարհումն ու զորակցությունը՝ այն հայ կանանց, որ իրենց որդիներից ու թոռներից, ամուսիններից ու եղբայրներից, հայրերից, սիրած տղաներից մարտիության շնորհավորանք չեն ստանալու. հավերժ պարտք ենք ձեզ նրանց ջերմությունն ու ուշադրությունը, որ զոհաբերվեցին հանուն հայրենիքի ...

Շնորհակալությունս՝ այն կանանց ու աղջիկներին, որ պատերազմի ընթացքում ցույց տվեցին, որ բանակի համար կարևոր հենարան են թիկունքում, նաև նրանց, որ անմիջական մասնակիցը դարձան ռազմական գործողություններին՝ ամենատարբեր ճակատներում՝ ռազմի դաշտում, մարդասիրական աշխատանքներում, առողջապահական համակարգում, քարոզչական ոլորտում՝ աշխարհին մեր ճշմարտացիությունը հասցնելով:

Սիրելի՛ կանայք ու աղջիկներ, կյանքը շարունակվում է, վերքերը սպի կդառնան, կամոքվեն կամ ոչ, իսկ մենք նոր ճակատ ունենք՝ հարատևելու և ուժեղանալու, հայ մնալու ու երկիր պահելու, ուստի խնդրում եմ ձեզ այդ ճանապարհին կատարել ձեր կարևոր առաքելությունը՝ մեր մատաղ սերնդին ու այն սերնդին, որ դեռ պիտի գա, դաստիարակվեք, ոգեշնչվեք, մեծացրեք ազգային ոգով, հայեցի արժեքներով՝ մեծ հայրենասիրություն ներարկելով ու լինելով այդ ամենի օրինակը, իսկ դա ամենաամուր հիմքը կլինի մեր նպատակների համար:

Խաղաղություն, առողջություն, ջերմություն եմ մաղթում բոլորիդ: